

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՑԱԿԱՆ ՑԱՐԱՑՈՅՑԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԶԵՒՍԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

Թեքուղի խօսքի մասերից բայերի փոփոխութիւններն ընդունուած է անուանել խոնարհում։ Գրաբարի խոնարհման լիակատար յարացոյցում արտացոլում են բայի կրած ձեւաբանական փոփոխութիւնները՝ ներառեալ բայի բոլոր եղանակաժամանակային (ինչպէս նաեւ անդէմ) ձեւերը, որոնք կազմում են բայաճիմքերի, բայածանցների, լծորդ ձայնաւորների եւ վերջաւորութիւնների զանազան զուգորդումներով։

Գրաբարի խոնարհման յարացոյցը հոլիվման յարացոյցի համեմատութեամբ աւելի բարդ պատկեր ունի՝ ինչպէս բայի քերականական կարգերի առաւել առատութեան, այնպէս էլ նրանց դրսեւորման ձեւերի կառուցուածքային եւ տիպաբանական բազմազանութեան ու ձեւերի տարրերակայնութեան հետեւանքով։ Այլ կերպ ասած՝ ի տարրերութիւն անուանական քերականական կարգերի, որոնք միարժէքօրին կապուած են որոշակի ձեւաբանական ցուցիչների հետ, բայական կարգերը բնութագրում են արտայայտութեան եւ բովանդակութեան դիտուածքների (պլանների) աւելի բարդ յարաբերակցութամբ։ Քերականական իմաստները յարացոյցի տարրեր հատուածներում կարող են արտայայտուել տարրեր միջոցներով՝ մասնիկաւորմամբ, հիմքակազմ տարրերի հերթագալութիւններով, դիմային վերջաւորութիւններով եւ այլն, իսկ որոշ քերականական կարգեր (յատկապէս՝ սեռի կարգը) յստակ միարժէք դրսեւորումներ չունեն։ Սա նշանակում է, որ գրաբարի խոնարհման համակարգը գտնուում էր մի իւրասեսակ անցումային շրջանում, երբ առաջանում են յետագայ որակական փոփոխութիւնների եւ համակարգի վերակառուցման նախադրեալներ։ Եւ իսկապէս էլ հայերէնի յետագայ պատմական զարգացման քննութիւնից պարզ է դառնում, որ խոնարհման համակարգը ենթարկուել է աւելի արմատական կառուցուածքային ու

տիպաբանական փոփոխութիւնների, քան հոլովման համակարգը, որի զարգացումն ընթացել է հիմնականում բազմաձեւութեան նուազման ու միօրինակացման ճանապարհով, թէեւ այստեղ էլ, անշուշտ, նկատելի են որոշ տիպաբանական տեղաշարժեր:

Խոնարհման համակարգի կառուցուածքային անմիօրինակութիւնը եւ քերականական իմաստների ու նրանց արտայայտութեան միջոցների բաշխման անհամամասնութիւնը կամ անզուգաչութիւնը (ասիմետրիան) դժուարացնում են յարացուցային ձեւերի սերման միասնական կաղապարների կառուցումը: Մասնաւորապէս, կորսուել է հիմքակազմիչ միաւորների (զանազան կերպածանցների եւ այլ տարրերի) իմաստային ու գործառական որոշակիութիւնը, եւ դրանք ձեռք են բերել միայն ձեւակազմական արժէք, այնպէս որ ձեւերի հակադրութիւնը միշտ չէ, որ ստեղծում է իմաստների հակադրութիւն եւ ընդհակառակն: Այստեղից էլ անհրաժեշտութիւն է առաջանում մեկնաբանելու յարացուցային միաւորների կազմութեան պայմանաւորուածութիւնը խոնարհման տիպերի եւ հիմքակազմութեան ձեւական առանձնայատկութիւններով:

Ամէնից առաջ պէտք է նշել, որ «խոնարհման տիպեր» տերմինը գրաբարի համար բազմանշանակ է. նոյնը կարելի է ասել նաեւ «հոլովման տիպեր» տերմինի մասին, որը նոյնպէս բազմանշանակ է¹, սակայն խոնարհման համակարգի դէպքում դասակարգումը նաեւ տիպաբանական է: Առաջին հերթին խոնարհման համակարգի (resp. յարացոյցի) մէջ տարբերակւում են համադրական եւ վերլուծական տիպերի կառուցուածքներ (սովորաբար կոչւում են պարզ եւ բաղադրեալ ժամանակաձեւեր), որ ընդհանուր տիպաբանական տեսակիտից յատուկ չէ հոլովման համակարգին: Իսկ նմանութիւնն այն է, որ, ինչպէս հոլովման համակարգի մէջ անուններն ըստ իրենց յարացոյցների ընդհանուր առանձնայատկութիւնների բաժանուում են հոլովման տարբեր տիպերի՝ հոլովմանների միջեւ (կամ, ի հակառակէն ասած, միաւորուում են նոյն հոլովման մէջ), բայերը եւս խոնարհման ընդհանուր առանձնայատկութիւններով բաժանուում են խոնարհման տարբեր տիպերի միջեւ, որոնք հայ քերականագիտութեան մէջ աւանդաբար ընդունուած է անուանել լծորդութիւններ կամ պար-

1 Այն արտացըլում է երեք կարգի միմեանց ստորակարգուող դասակարգումներ՝ արտաքին եւ ներքին հոլովումներ=>պարզ եւ խանո հոլովումներ => առանձին հոլովումներ ըստ հոլովիչ հայնաւորմների:

զապէս խոնարհումներ: Բայսական յարացոյցի համադրական ձեւերը կազմւում են հիմքի եւ վերջաւորութեան կցումով, ըստ այդմ խոնարհումը կամ լծորդութիւնը որոշում է վերջաւորութեան ձայնաւորումից, այսինքն՝ լծորդութիւնները տարբերակուում են այսպէս կոչուած խոնարհչէ կամ լծորդ (կամ թեմատիկ) ձայնաւորներով ա, ե, ի, ու, ո (վերջինա միայն գոմ պակասաւոր բայում): Համապատասխանաբար առանձնացում են Ա, Ե, Ի, Ո խոնարհումները, որոնք որոշում են սահմանական եղանակի ներկայ ժամանակաձեւից: Մրանով ի յայտ է գալիս բայի թեքման յարացոյցի միւս տարբերութիւնը անուանականից, որտեղ կարելի է առանձնացնել այսպէս կոչուած աննշոյթ ելակէտային ձեւ՝ եզակի ուղղականը, որից զանազան վերջաւորութիւնների կցումով կամ հիմքի հնչիւնական հերթագյուղութիւններով կազմւում են յարացոյցի թեք ձեւերը: Մինչդեռ խոնարհման յարացոյցում աննշոյթ անդամները (կարող են ի յայտ գալ բացառիկ դէպքերում՝ որոշ բամբի հրամայականի կամ անցեալ կատարեալի սակաւթիւ ձեւերում², որոնցից յստակ գործողութիւններով հնարաւոր չէ արտածել յարացոյցի միւս անդամները: Այսպէս որ այստեղ փաստօրէն չունենք բոլոր բայերի համար կիրառելի ընդհանրական ելակէտային ձեւ, որի գերը, ինչպէս գիտենք, ժամանակակից հայերէնում կատարում է անորոշ դերբայր: Միւս կողմից՝ գրաբարի դասական շրջանում անորոշ դերբայրում հանդէս են գալիս միայն ա, ե, ու ձայնաւորները, քանի որ ի խոնարհման բայերի անորոշ դերբայր ձեւով համընկնում է և խոնարհման բայերի անորոշ դերբային: Այս է պատճառը, որ խոնարհման յարացոյցի ելակէտային ձեւը պայմանականօրէն համարում է ոչ թէ անորոշ դերբայր, այլ սահմանական եղանակի ներկայ ժամանակի եզակի թուի առաջին դէմքը, որով եւ կատարում է խոնարհման տիպերի դասակարգումը: Սահմանական ներկայի առաջին դէմքը միաժամանակ ընդունուած է նաեւ որպէս բայերի բարանային ձեւ (գլխաբառ):

Ուսումնասիրուող շրջանում ա, ե, ի, ու, ո թեմատիկ ձայնաւորները որեւէ քերականական նշանակութիւն չունեն, թէեւ պատմահամեմատական քննութիւնը թոյլ է տալիս ենթագրելու, որ նախագրային շրջանում դրանք ծառայել են բայասեռի արտայայտմանը: Սակայն պատմականօրէն վկայուած ժամանակաշր-

2 Անցեալ կատարեալի եզակի երրորդ դէմք կամ բուն երամայականի եզակի երկրորդ դէմք:

ջանի լեզուում՝ դասական գրաբարում, դրանց այդ գործառովթը չի պահպանուել, այդ ձայնաւորները պարզապէս մատնանշում են խոնարհման տիպը կամ լծորդութիւնը, քանի որ արդէն վերացել էր երբեւէ գոյութիւն ունեցած փոխայմանաւորուածութիւնը բայի սեռի, կազմութեան եւ լծորդութիւնների միջեւ։ Հետազօտողները նկատում են միայն որոշ մնացուկային երեւոյթներ։ Մասնաւորապէս, նշուում է, որ Ա. խոնարհման բայերը առաւելապէս չէզոք սեռի են, իսկ Ե. խոնարհման բայերը ներգործական են եւ կրաւորականի փոխուելիս ստանում են ի լծորդութիւն։ Սակայն միաժամանակ Խ. խոնարհման բայերը իրենք կարող են լինել ինչպէս ներգործական, այնպէս էլ կրաւորական սեռի։ Գրաբարում կարեւոր երեւոյթ է նաև կրկնասեռութիւնը, երբ միեւնոյն ձեւով բայը կարող է նշանակել եւ կրաւորականութիւն եւ ներգործականութիւն։

Բացի լծորդութիւններից գրաբարի բայական յարացոյցների կառուցուածքում կարեւոր գեր ունի նաև բայի կազմութիւնը։ Միեւնոյն լծորդութեան պարզ եւ ածանցաւոր բայերը յարացոյցներում կարող են տարբերուել խոնարհման որոշակի ձեւակազմական առանձնայատկութիւններով։ Այս երեւոյթը յատուկ է միայն բայերին։ Մինչդեռ միւս խօսքի մասերի՝ անունների եւ դերանունների բառափոխական (ձեւաբանական) յարացոյցների միաւորների կառուցուածքը պայմանաւորուած չէ ելակէտալին բառաձեւի պարզ կամ ածանցաւոր կազմութեամբ³։ Այստեղ պէտք է նաև նշել, որ բայերի համար պարզ եւ ածանցաւոր բնորոշումները նոյնը չեն, ինչ միւս խօսքի մասերի դէպքում է։

Հայերէնում բառակազմական տեսակէտից բայերը միշտ հանդէս են գալիս որպէս բաղադրեալ կազմութիւններ, դա միակ խօսքի մասն է, որ բառարանային ձեւում ունի ձեւաբանական ցուցիչ⁴ իսկ անորոշ գերբայում՝ լ ածանց-վերջաւորութիւն, որին նախորդում են լծորդ կամ թեմատիկ ձայնաւորները, ընդուրում անորոշ գերբայի վերջաւորութիւնը ունի միաժամանակ

3 Անուանական եւ դերանուանական հոլովատիվերի բաշխման պայմանները (երէ հնարաւոր է դրանք որոշել), առաւելապէս կապում են անունների հնչիւնական ձեւաւորման, մասամբ նաև իմբատային խմբաւորումների հետ, որոնք ընդհանրական բնոյք չունեն։ Սակայն սա ընթանական նիւթեան առանձին նիւթե է, որին սոյն յօդուածի սահմաններում չենք անդրադարձուած։

4 Գրաբարի բառարանագրական աւանդոյքում՝ դիմային վերջաւորութիւն, իսկ աշխարհաբարում՝ անորոշ դերբայի վերջաւորութիւն։

թէ՝ ձեւակազմական, թէ՝ բառակազմական արժէք: Սրա հետեւանքով բայական բառոյթը միշտ բաղադրեալ է, կազմուած է առնուազն երկու ձեւոյթից՝ արմատից եւ վերջաւորութիւնից: Սակայն բառակազմօրէն երկձեւոյթ կազմութիւն ունեցող այսպիսի բայերը ձեւաբանական տեսակէտից պարզ են համարւում: Ածանցաւոր են համարւում վերջաւորութիւնից առաջ յատուկ բայածանցներ ունեցող բայերը, որոնցում բայածանցներն ունեն ձեւաբանական-հիմքակազմական, բայց ոչ բառակազմական արժէք: Հայ քերականագիտութեան մէջ աւանդաբար ընդունուած է բայածանցները բաժանել երեք խմբի՝¹ 1. սոսկածանցների կամ բաղադրական ածանցների, 2. պատճառական ածանց (ներ)ի եւ 3. բազմապատկական ածանցների:

Սրանցից ձեւաբանական (աւելի ճշգրիտ՝ ձեւակազմական) արժէք ունեն միայն առաջին եւ երկրորդ խմբերի ածանցները, այսինքն՝ բաղադրական ածանցները (-ան-, -անց-, -աչ-, -են-, -նց-, -չ-) եւ պատճառական ածանցը՝ իր հնչինական տարրերակներով (-ոյց+ան = -ուցան/-ուզան/-ուսան): Խոկ բազմապատկական ածանցները (-ատ-, -ոտ-, -տ-, -կ-, -չ-)⁵ իրականում ընդամէնը բառակազմական արժէք ունեն եւ ձեւաբանական տեսակէտից սահմանափակուում են միայն է խոնարհման բայերով: Սրանք կարող են բային հաղորդել որոշ թոյլ կերպային (բազմապատկական կամ սաստկական) երանդ, որը բխում է առաւելապէս տուեալ բայի բառակազմական իմաստից եւ քերականական կանոնաւոր հակադրութիւններ չի դրսեւորում: Այլ կերպ սասա՞ գրաբարի եւ ընդհանրապէս հայերէնի բազմապատկական բայածանցները քերականացուած չեն եւ բային տալիս են միայն որոշակի բառային իմաստ: Այնուամենայնիւ, գրաբարի շատ քերականութիւններում յատուկ կերպով նշում եւ ներկայացւում են բազմապատկական իմաստ ունեցող բայերը որպէս առանձին խումբ:

⁵ Որքան մեզ յայտնի է, գրաբարի ֆերականութիւններում -չ- բազմապատկական ածանց չի առանձնացնուել, թերեւս օրինակների սակաւութեան կամ -չ- սոսկածանցին համընկնելու պատճառով: Այդ ածանցը գտնում ենք կարկոչներ՝ ու զեղչեմ/զեղչիմ բայերում (հնմոն. նաև եղծ-եմ/զ-եղծ-եմ արմատական տարրերակները եւ զեղչներ զուգածներութիւնը, որտեղ արմատի ծ-ն ընկել է յաջորդող չի ազդեցութեամբ): Եղծ- արմատով կան նաև եղծ-մ-ում, եղծ-ամ-եմ, զ-եղծ-ամ-եմ սոսկածանցաւոր բայերը: Նշենք նաև, որ այս -չ- ածանցով, ինչպէս նաև բազմապատկական համարուած միւս ածանցներով բայերում աւելի ուժեղ զգացւում է սաստկականութեան, քան բազմապատկականութեան իմաստը:

(որոշ հեղինակներ առանձնացնում են երկու տարատեսակութիւն՝ բազմապատկական ածանցներով եւ բառարմատի կրկնութեամբ կազմուած, եւ բերում են համապատասխան օրինակներ):⁶

Ինչ վերաբերում է բաղադրական ածանցներին կամ աւանդական անուանումով սոսկածանցներին, ապա դրանք ընդհակառակն, ուսումնասիրուող լրջանում գրկուած լինելով որեւէ քերականական կամ բառակազմական իմաստից, որոշակի գեր են խաղում բայական յարացոյցների կառուցման, մասնաւորապէս հիմքակազմութեան մէջ: Մրանց մէջ ակնյայտ բառակազմական իմաստով կարելի է առանձնացնել միայն Ախոնարհման բայերի -ան ածանցը, որով կազմում են «տուեալ յատկանիշը ձեռք բերելու, այդպիսին դառնալու, վերածուելու» բառային (բայց ոչ քերականական) իմաստ ունեցող բայեր, ինչպէս օրինակ՝ աղբատանամ, անհամանամ, անշնչանամ, առատանամ, առողջանամ, կարծրանամ, հարստանամ եւ նման բազմաթիւ բայեր: Իր իմաստագործական արժէքով այս ածանցը զանազանում է բուն սոսկածանցներից (թէեւ հնարաւոր է, որ ունի նոյն ծագումը), ուստի այն թերեւս կարելի է համարել ձեւով -ան- սոսկածանցին համընկնող, բայց նրանից տարբեր գործառութով բառակազմական համանուն ածանց, մանաւանդ որ կան բուն -ան սոսկածանցով Ախոնարհման՝ հաւանաբար աւելի հին ծագման նոյնպէս զգալի քանակութեամբ բայեր՝ արմանալ/զարմանալ, իմանալ, գողանալ, լուանալ, մոռանալ եւ այլն, որոնցում -ան ածանցը բառակազմական կամ թէկուզ քերականական իմաստ մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում այլեւս չունի: Հետեւաբար՝ վերը նշուած բայական ածանցների մէջ միայն պատճառական ածանցն է, որ դասական գրաբարում ունի որոշակի քերականական իմաստ եւ գործառոյթ:

Թէ՛ պարզ, թեւ՝ ածանցաւոր կազմութիւն կարող են ունենալ բոլոր չորս լծորդութիւնների բայերը:

Ինչպէս խոնարհման տիպերի միջեւ բայերի բաշխումը խիստ անհամաշափ է, նոյնպիսի անհամաշափութիւն նկատում է նաեւ իւրաքանչիւր լծորդութեան պարզ եւ ածանցաւոր կազմութիւնների յարաբերակցութեան մէջ:

Ստորեւ բերուում են պարզ եւ ածանցաւոր բայերի օրինակներ՝ ըստ առանձին խոնարհումների:

6 Տե՛ս օրինակ՝ ԱԲՐԱՀԱՄՄԵՍՆ, Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան 1958, 111, 114: ԽԱԶԱՏՐԵՍՆ, Գ., Գրաբար, Երևան 2014, 170-172:

«Ա» ԽՈՆԱՐՀՈՒՄ

«Ա» խոնարհման պարզ բայերը ածանցաւորների համեմատ զգալիորէն սակաւաթիւ են, ուսումնասիրուող շրջանից վկայուած են՝

աղամ, ամամ, անխայեամ, անհաւատամ, անսամ, ատեսամ, բամ, դլամ, եռամ, երբամ, զգամ, զեռամ, լամ, լողամ, լուղամ, խաղամ, խայտամ, խանդամ, խիթամ, խրոտամ, խղայտամ, խնայեամ, խնդամ, խոկամ, խորդամ, խրոխոտամ, կաղամ, կարդամ, կեսամ, հեղդամ, հեռամ, հեղուամ, հեղուամ, մկրամ, մնամ, յողամ, յորամ, յուսամ, նիտամ, ննջամ, շնամ, շողամ, շքամ, ողրամ, որոնամ, որոտամ, որսամ, չաւատամ, պանծամ, պատուեամ, պժգամ, պիտամ, ջանամ, սարսուամ, սգամ, սիգամ, սողամ, սուրամ, սոսկամ, սպառնամ, սրամ «խիստ ցանկալ, բաղձալ», վիրամ «մազերը կտրել, աափրել», տենչամ, տոկամ, ցանկամ, ցնծամ, փուրամ, փոնկամ, փոնչամ, փրփեամ, փեամ, քաղցամ քաղցեամ։

«Ա» խոնարհման ածանցաւոր բայերը կազմուած են ան, եւ ն սոսկածանցներով կամ բաղադրական ածանցներով⁷, որոնցից առաւել յաճախական է -անը, միւաները սակաւադէպ են։

-Ա.Յ. ածանցով կազմութիւններ - ազատանամ, ամբարշտանամ, աղքատանամ, ամլանամ, ամրանամ, անգիտանամ, ամրանամ, գոհանամ, գողանամ, գոյանամ, զգաստանամ, զգուշանամ, ընդարմանամ, ընդդիմանամ, իմանամ, իմաստնանամ, լաւանամ, լուանամ, խըլանամ, խոյանամ, խոպանանամ, խրոխտանամ, ծառանամ, ծերանամ, կենդանանամ, մեկուսանամ, շենանամ, ուրախանամ, սբանչանամ, փայտանամ, քարանամ եւ այլն,

-Են- ածանցով կազմութիւններ - արքենամ, այգենամ, մերձենամ,

-Ն- ածանցով կազմութիւններ - ամբառնամ, բանամ, բառնամ, դառնամ, թանամ, համբառնամ։

«Ա» խոնարհման ածանցաւոր բայերի մէջ նկատում են հետեւեալ զուգաձեւութիւնները՝

-Ա.Յ. եւ -են ածանցներով զուգաձեւութիւններ - այգանամ-այգենամ, մերձանամ- մերձենամ։

Կան նաեւ պարզ եւ ածանցաւոր բայերի զուգաձեւութիւններ՝

7 Երենց ձեւաբանական գործառոյքով սրանց է միանում նաև վերը նըշուած՝ բառակազմնական արժէկ ունեցող -աՅ- ածանցը, ուստի օրինակներում դրանցով կազմուած բայերը չեն առանձնացւում։

-Ա.6 ածանցով – ամամ-սմբանամ, անհաւատամ-անհաւատանամ, բաղձամ-բաղձանամ, զդշամ-զդշանամ//զեղշանամ, ըդամ-ըդանամ, խրոխտամ-խրոխտանամ, ծուլամ-ծուլանամ, մշտնչենամ-մշտընչենանամ, մուրամ-մուրանամ, յոխորտամ-յոխորտանամ, ոխամ-ոխնամ, պանծամ-պանծանամ, տաղտկամ-տաղտկանամ, տենչամ-տենչանամ, ցանկամ-ցանկանամ եւ այլն:

«Ե» ԽՈՂԱԾՈՒԻՄ

Ի տարբերութիւն «Ա» խոնարհման բայերի՝ «Ե» խոնարհման բայերը գերակշիռ մասով պարզ կազմութիւն ունեն:
«Ե» խոնարհման բաղադրական ածանցներն են՝ -ան, Հազորադէպ՝ -ն, -անչ, -աչ:

«Ե» խոնարհման պարզ բայեր՝

ազդեմ, ածեմ, ահեմ, աղեմ, ամանեմ, ասեմ, աղմկեմ, այլափոխեմ, անժտանեգեմ, աշխարհագիտեմ, բարախեմ, բաժանեմ, բաշխեմ, բժշկեմ, բովանդակեմ, բորբոքեմ, գայթակղեմ, գլխաւորեմ, դատապարտեմ, դաւաճանեմ, զրպարտեմ, ըմբերանեմ, բախանեմ, բարգմանեմ, ժամանակագրեմ, խափանեմ, խորամանկեմ, մերաւառորեմ, մեթենառորեմ, նորոգեմ, նուագեմ, նուանեմ, չարչարեմ, սրտապնդեմ, վիպասանեմ, վիրաւորեմ, վտարանդեմ, տատանեմ, փայփայեմ, փառաւորեմ, բանդակեմ, բաջակերեմ, քննեմ եւ այլն:

«Ե» խոնարհման ածանցաւոր բայեր՝

-Ա.6- ածանցով կազմութիւններ – անիծանեմ, անկանեմ, անջտանեմ, անցանեմ, առանցանեմ, առանցանեմ, առողջանեմ, արածանեմ, արծարծանեմ, արկանեմ, աւծանեմ, բեկանեմ, բուծանեմ, գերծանեմ, գուանեմ, ելանեմ, եղծանեմ, երգիծանեմ, զանցանեմ, զատանեմ, զեղծանեմ, զերծանեմ, զիշանեմ, ընդմտանեմ, ընթերցանեմ, ըստգտանեմ, բքանեմ, իշանեմ, լիզանեմ, լուծանեմ, լուցանեմ, խածանեմ, կլանեմ, կծանեմ, հասանեմ, հատանեմ, հարկանեմ, հարցանեմ, հերձանեմ, մուծանեմ, մտանեմ, յանցանեմ, յարկանեմ, ներկանեմ, շտոգանեմ, շրջանակեմ, ողողանեմ, ոռոգանեմ, պագանեմ, սուզանեմ, սպանանեմ, ստգտանեմ, ստեղծանեմ, տարածանեմ, ցուցանեմ եւ այլն:

-Ն- ածանցով կազմութիւններ – առնեմ, դնեմ, յառնեմ, պըշեմ, սունայնեմ «հառաչել, ախ քաշել»,

-Ա.6- ածանցով կազմութիւններ – մնդանեմ,

-Ա.Հ- ածանցով կազմութիւններ – նանաչեմ.

«Ե» խոնարհման բայերի մէջ կան նաեւ պարզ եւ ածանցաւոր բայերի զուգաձեւութիւններ՝ անիծեմ-անիծանեմ, անշատեմ-անշատանեմ, առակեմ-առականեմ, արածեմ-արածանեմ, արծարծեմ-արծանեմ, զանգեմ-զանգանեմ, զատեմ-զատանեմ, զեղծեմ-զեղծանեմ, լիզեմ-լիզանեմ, լինեմ-լինանեմ, իփիսմ-իփիանեմ, յատեմ-յատանեմ, յարկեմ-յարկանեմ, ներկեմ-ներկանեմ, ողողեմ-ողողանեմ, ոռոգեմ-ոռոգանեմ, սուզեմ-սուզանեմ, տարածեմ-տարածանեմ եւ այլն:

«Ի» ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԵՐԸ

Այս խոնարհման բայերը չորս լծորդութիւնների մէջ քանակով գրաւում են երրորդ տեղը: Սրանք նոյնպէս կարող են լինել պարզ եւ ածանցաւոր: «Ի» խոնարհման բայերի սոսկածանցներն են -ան, -ն, -նչ, -չ, ընդ որում՝ -նչ, -չ ածանցներն ունեցող բայերի խոնարհման յարացոյցները տարբերում են -ան ածանցով բայերի յարացոյցից:

«Ի» ԽՈՆԱՐԻՄԱՆ ՊԱՐԵՐԸ

ազակիմ, ազդիմ, ալեւորիմ, ակնունիմ, աղեատիմ, ամբարհաւանիմ, ամբարշտիմ, պամբարտաւանիմ, այլայիմ, այսահարիմ, անագանիմ, ապրիմ, բազմիմ, բանակիմ, բերկիմ, բնակիմ, գայրիմ, գարշիմ, դադարիմ, դեկերիմ, երերիմ, երեւիմ, զգածիմ, ընդունիմ, նեմիմ, մաւտիմ, մեծարանիմ, միարանիմ, յանգիմ, յետնիմ, պարծիմ, պարտասիմ եւ այլն:

«Ի» ԽՈՆԱՐԻՄԱՆ ԱԾԱՆՑԱՎԱՒՐ ԲԱՅԵՐԸ

-Ա.Ա ածանցով կազմութիւններ – ազանիմ «հագնել», ագանիմ «գիշերել», ազազանիմ, ածանիմ «գօտեւորուել», անկանիմ, առածանիմ, արկանիմ, բռասանիմ, եղանիմ, զառածանիմ, զրաւսանիմ, զիշանիմ, ընդեւանիմ, քռանիմ, լնանիմ, ծնանիմ, հեծանիմ, մածանիմ, մեռանիմ, յարկանիմ, շիշանիմ, ուսանիմ, պարանիմ, պրծանիմ, չերանիմ//չեռանիմ, չերմանիմ, սկսանիմ, սնանիմ, փլանիմ, փրծանիմ,

-Ն ածանցով կազմութիւններ – լինիմ, տանիմ

-ՆՀ ածանցով կազմութիւններ – երկնչիմ, կորնչիմ, մարտնչիմ, յարնչիմ

-Զ ածանցով կազմութիւններ – անկչիմ, արբչիմ, զատչիմ, չեղծիմ, ընդուսչիմ, թաքչիմ, քոչիմ, խարչիմ, կառչիմ, հանգչիմ, մատչիմ, յագչիմ, յանգչիմ, յափչիմ, ոստչիմ, պակչիմ, սարտչիմ, փախչիմ

«Ի» խոնարհման բայերի մէջ նկատում են պարզ եւ ածանցաւոր կազմութեան հետեւեալ զուգաձեւութիւնները՝ առածանիմ-առածիմ, գժդմիմ-գժդմնիմ, զգածիմ-զգածնում (լծորդութ-

եան փոփոխութեամբ), մատիմ-մատչիմ, յագիմ-յագչիմ, յանգիմ-յանգչիմ, ինչպէս նաեւ տարբեր սոսկածանցներով՝ թռանիմ-թռչիմ:

«ՈՒ» ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

«ՈՒ» խոնարհումը միւս խոնարհումների համեմատութեամբ ներկայացուած է բայամիաւորների ամենաքիչ քանակով (62 միաւոր⁸), բայց դրանց մէջ նոյնպէս ըստ կազմութեան տարբերակում են պարզ եւ ածանցաւոր բայեր:

«ՈՒ» ԽՈՆԱՐՀԻՄԱՆ ՊԱՐՊ ԲԱՅԵՐ՝

առաւելում, արգելում, գելում, գերծում, գեղում, զենում, զերծում, բողում, լեզում//իզում, լեսում, կասում, կարկառում, կիզում, հանում, հեղում, հենում, հիւսում, յառում, յաւալում, յեղում, յեռում, ստեղծում, ցելում, վերծում:

«ՈՒ» ԽՈՆԱՐՀԻՄԱՆ Ածանցաւոր ԲԱՅԵՐ՝

-ԵՇ- ածանցով կազմութիւններ – ընկենում//զընկենում,

-Ե- ածանցով կազմութիւններ – պյոնում, առնում, առլընում, երդնում, զարբնում, զրայնում, զրաւսնում, զգածնում, ընդելնում, ընկլնում, ընդոսնում, թաքնում, լենում (կրաւ. լեիմ)⁹, խափնում, խնում, խրտնում, հարբնում, հեղձնում, շրտնում, ոստնում, ուռնում, պակնում, պշենում, չեռնում, սարտնում, սկսնում, ցածնում, ցասնում, քաղցնում:

Ինչպէս արդէն նշուել է, ընդհանուր տիպաբանական տեսակէտից գրաբարի բայերի եղանակաժամանակային ձեւերը բաժանում են երկու խմբի՝ համարական եւ վերլուծական կառուցուածք ունեցողների:

Համարդրական ձեւերը ըստ լծորդ ձայնաւորների բաշխուում են խոնարհման չորս հիմնական տիպերի (խմբերի) միջեւ՝ ա, և, ի, ու (հիգերորդ՝ ո լծորդութեան միակ գոմ բայց սովորաբար ներկայացում է անկանոն եւ պակասաւոր բայերի յարացոյցներում):

Վերլուծական ձեւերը կազմուում են գերբայների եւ օժանդակ բայերի յարագրութեամբ։ Գրաբարի չորս գերբայներից (անորոշ, ներկայ կամ ենթակայական, անցեալ եւ ապատի) եղանակաժամանակային ձեւերի կազմութեանը մասնակցում են անցեալ

8 Ա.Ռ.Ա.ՔԵԼԵՍԱՆ, Վ., Գրաբարի Քննականութիւն, Երևան 2010, 158:

9 ՆՀԲ, հար. 1, էջ 891:

եւ ապառնի դերբայները՝ որպէս բաղադրեալ կազմութիւնների իւրատեսակ վերլուծական բայահիմքեր՝ ևմ կամ լինիմ օժանդակ բայերի խոնարհուած ձեւերի յարագրմամբ:

Թէ՛ վերլուծական, թէ Համադրական բայաձեւերի ամբողջութիւնը բաշխուում է երկու՝ սահմանական եղանակի անկատար ներկայի եւ անցեալ կատարեալի հիմքերից կազմուած խմբերի միջեւ։ Համադրական ձեւերի մէջ հիմքերն ի յայտ են գալիս խոնարհուած բայաձեւերում, իսկ վերլուծական ձեւերի մէջ՝ դերբայի կազմում։

Ներկայի հիմքը անորոշ դերբայի վերջաւորութեանը նախորդող մասն է՝ ներառեալ բայածանցները։ Ըստ այդմ հիմքերը կարող են լինել պարզ կամ ածանցաւոր։ Ինչպէս արդէն նշուել է, բայածանցներից ձեւաբանական արժէք ունեն միայն բաղադրական ածանցները (սոսկածանցները) եւ պատճառական ածանցները, որոնք մասնակցում են յարացուցային անդամների կառուցմանը։ Ընդ որում, եթէ պատճառական ածանցները կապուած են որոշակի քերականական իմաստի հետ, ապա նոյնը չի կարելի ասել սոսկածանցների մասին, որոնք կորցրել են իրենց նախկին կերպային իմաստները եւ հանդէս են գալիս որպէս «սոսկ» ձեւակազմական-հիմքակազմական մասնիկներ, որով հակառութիւն է ստեղծուում ներկայի եւ անցեալ կատարեալի հիմքերից կազմուած ձեւերի միջեւ՝ բաշխման որոշակի կանոններով։

Կատարեալի հիմքը նոյնպէս կարող է լինել պարզ (արմատական), կամ բաղադրեալ (ածանցաւոր)։ Կատարեալի պարզ հիմքը համընկնում է բայարմատին՝ սովորաբար բայաձացնյանգ։ Բաղադրեալ հիմքերը ըստ հիմքակազմիչ ածանցերի աւանդաբար անուանուում են «ցյալական» -ց- հնչինը պարունակող -եց (եց) ածանցով, եւ «իշական»¹⁰ համապատասխանաբար՝ -ի ածանցով (-ի թոյլ բաղադրիչով):

Յարացոյցում կատարեալի հիմքի ընտրութիւնը պայմանաւորուած է բայերի ելակիտային համարուած ձեւի՝ անկատար ներկայի կազմութեան եւ լծորդութիւնների յարաբերակցութեամբ, այսինքն ըստ այնմ, թէ որ խոնարհման է պատկանում սուեալ բայը (Ա, Ե, Ի, Ու) եւ ինչ կազմութիւն ունի (պարզ թէ ածանցաւոր)։

10 Գ. Խաչատրեամբ ցյալական եզրոյթի համարմութեամբ առաջակում է այս հիմքը կոչել ի՞նիական (տե՛ս թշ. աշխ., 183)։

Ստորեւ բերուող հիմքակազմական աղիւսակը ներկայացնում է յարացոյցի համադրական կազմութիւն ունեցող անդամների կառուցուածքում հիմքերի բաշխումը ըստ բայերի կազմութեան եւ ըստ լծորդութիւնների:

Աղիւսակ 1

| Հիմքեր հիմքներ | (Խ ն ն ա պ հ ո ւ մ ն ե ր (Ը ծ ն ր դ ո ւ թ ի ւ ն ն ե ր) | | | | | | | |
|--------------------|---|--|---------------------------------|-----------------------|------------------------------|---|-------------------|---|
| | Ա | | Ե | | Ւ | | ՈՒ | |
| Ներկայական հիմքներ | Պարզ աղ-ամ | Ածանցաւոր ¹ հեռ+ան-ամ մօս+նե-ամ | Պարզ ² սիր-եմ | Ածանցաւոր ել+ան-եմ | Պարզ ³ բազմ-իմ | Ածանցաւոր անլ+ան-իմ երկ+նշ-իմ փախ+չ-իմ | Պարզ քող-ում | Ածանցաւոր ⁴ չեռ+ն-ում զարբ+ն-ում |
| Կառարկաներ | Ցոյա-կան աղ+աց- | Ցոյա-կան հեռ+աց-մօս+նց- | Ցոյա-կան սիր+եա ց/ եց- | Արմատական ել- | Ցոյա-կան բազմ+նաց/ եց- | Արմատական անկ-իական իական երկ+ի-փախ+ի- | Արմատական քող- | Արմատական իական զարբ+ի |

Աղիւսակում տրուած ծանօթագրութիւնների համարներն արտացոլում են հետեւեալ առանձնայատկութիւնները կամ չեղումները ընդհանուր օրինաչափութիւններից:

1. «Ա» խոնարհման պատկանող բառնալ եւ դառնալ բայերի անցեալ կատարեալը կազմում է բարձ, դարձ, խկ բանալ եւ թանալ բայերինը՝ բաց, բաց հիմքերով:
2. «Ե» խոնարհման պատկանող հինգ պարզ բայեր՝ ասել, գիտել, կարել, մարթել, մերկել, անցեալ կատարեալը կազմում են էաց-ի փոխարէն-աց բաղադրիչով՝ ասաց, գիտաց, կարաց, մարթաց, մերկաց¹¹:

11 Վ. Առաքելեանն այս շեղումը բացատրում է նրանվ, որ այդ բայերը հաւանաբար սկզբնապես եղել են Ա. Խոնարիմանի, եւ այդ պատճառով է, որ անցեալ կատարեալի հիմքից կազմուած ձեւերում վերականգնում են իրենց խոնարիիչ ա ծայնաւորը (ԱՌԱՔԵԼԵԱՆ, Վ., 62. աշխ., 126, § 140):

«Ե» խոնարհման ածել, բերել, հանել, հեղուսել պարզ բայց յերը կատարեալում ունեն արմատական հիմք՝ ած, բեր, հան, հեղոյս:

«Ե» խոնարհման համբերել պարզ բայց ունի ցոյական եւ արմատական գուգաձեւութիւն՝ համբեր/համբերեաց:

3. «Ի» խոնարհման պատկանող նստել (նստիմ) բայի կատարեալի հիմքը ունի արմատական կազմութիւն՝ նիստ (նստ):
4. «Ու» խոնարհման պատկանող վեց բայեր՝ ընկենուլ, ընթեռնուլ, զգենուլ, լնուլ, լնենուլ, լնեմուլ, կատարեալում ունեն ցոյական հիմք՝ ընկեաց (ընկեց), ընթերց, զգեաց (զգեց), լից (լց), խից (խց), յեց:

Եթէ ներկայի եւ կատարեալի հիմքերի կառուցուածքը կատուած է, ինչպէս ասուեց, լծորդութիւններից եւ բայի կազմութիւնից, ապա այդ հիմքերը իրենց հերթին պայմանաւորում են եղանակաժամանակային ձեւերի, ինչպէս նաեւ դերբայների կազմութիւնը:

Ներկայի հիմքից կազմուում են սահմանական եղանակի ներկան, անցեալ անկատարը, առաջին ապառնին, արգելական հրամայականը, անորոշ եւ ապառնի դերբայները, ինչպէս նաեւ որոշ բայերի անցեալ եւ ենթակայական դերբայները: Կատարեաւի հիմքից կազմուում են անցեալ կատարեալը, երկրորդ ապառնին, բուռն հրամայականը, յորդորական հրամայականը, մի շարք բայերի անցեալ եւ ենթակայական դերբայները¹²:

Համար 2 աղիւսակը արտացոլում է այն ընդհանուր սխեման, որով ըստ ներկայի եւ կատարեալի հիմքերի բաշխուում են դիմաւոր (եղանակաժամանակային) եւ անդէմ (դերբայական) ձեւերը:

Աղիւսակ 2

| Դիմաւոր ձևեր | Ներկայի հիմք | Կատարեալի հիմք |
|--------------|---|--|
| | Ներկայ Անցեալ անկատար Առաջին ապառնի Արգելական հրամայական | Անցեալ կատարեալ Երկրորդ ապառնի Բուռն հրամայական յորդորական հրամայական |

12 ՄԻՒԱՍԵԱՆ, Մ., Դասական հայերէթի նկարագրական ժերականութիւն,
Ժնեվ 1996, 51:

| | |
|---|--|
| Անդամականության մասին այլ օրենքը Անդամականության մասին այլ օրենքը (Անցեալ եւ ենթակայական դերաբանի մի մասը) | Անդամականության մասին այլ օրենքը Անդամականության մասին այլ օրենքը |
|---|--|

Այսպէս, գրաբարի համադրական խոնարհման յարացոյցի անդամների կառուցուածքը պայմանաւորուած է մի կողմից՝ բայահիմքերի կազմութեամբ, միւս կողմից՝ դիմային վերջաւորութիւնների լծորդ ճայնաւորներով։ Ընդ սմին, թէ՛ բայահիմքերը, թէ՛ դիմային վերջաւորութիւնները դիմքային պայմանաւորուածութիւն ունեն։ Այլ կերպ ասած՝ որոշակի հիմքերից կազմուած են որոշակի եղանակաժամանակային ճեւեր եւ վերջաւորութիւնների որոշակի խմբեր կազմուած են որոշակի լծորդութեան այս կամ այն ժամանակաձեւը։

Վերլուծական յարացոյցի անդամների կառուցուածքում ներկայի եւ կատարեալի բայահիմքերը հանդէս են գալիս գերբայնների մէջ՝ դերբայական վերջաւորութիւններից առաջ։ Ներկայի կամ կատարեալի հիմքերով ճեւաւորուած դերբայններն իրենք, ինչպէս նշուեց, դառնուած են բաղադրեալ կազմութիւնների իւրատեսակ վերլուծական բայահիմքեր, որոնք զուգորդուում են և լինիմ օժանդակ բայերի հետ՝ ստեղծելով վերլուծական եղանակաժամանակային ճեւերը։

Բաղադրեալ կամ վերլուծական ժամանակաձեւերը, ինչպէս նշուել է, կազմուած են դերբայնների եւ օժանդակ բայերի յարացութեամբ։ Բաղադրեալ ժամանակաձեւերի կազմութեանը մասնակցուած են անցեալ (գրեալ) դերբայնները, իսկ օժանդակ բայերից՝ եմ եւ լինիմ բայերը։ Քանակապէս աւելի շատ են և բայով կազմուած ժամանակաձեւերը, որոնցում հանդէս են գալիս նշուած երկու դերբայնները։ Լինիմ բայով վերլուծական ժամանակներ են կազմուած միայն անցեալ դերբայի յարացութեամբ¹³։

Բաղադրեալ ժամանակաձեւերի քանակը պայմանաւորուած է եմ եւ լինիմ օժանդակ բայերի յարացոյցով, որոնք ունեն երեք

13 Հմտ. ԱՐՄԱԿԱՄԵԱՆ, Ա., Գրաբարի ձեռնարկ, Երեւան 1958, 227 եւ յաջ. ՇԱՐԱԲԻՆԱՆԵԱՆ, Պ. Ն., Գրաբարի դասըմբաց, Երեւան 1974, 214 եւ յաջ., ԽԱԶԱՏՐԵԱՆ, Լ., ԹՈՍՈՒՆԵԱՆ, Գ., Գրաբարի դասագիրք, Երեւան 2004, 227 եւ հաջ։

Ժամանակ սահմանական եղանակում՝ ներկայ (եմ, ես է, եմք, եք, են, լինիմ, լինիս, լինի, լինիմք, լինիք, լինին), **անցեալ անկատար** (էի, էիր, էր, էաք, էիք էին, լինեի, լինէիր, լինէր, լինէաք, լինէիք, լինէին), **անցեալ կատարեալ՝ եղանիմ բայի կատարեալի ձեւերով** (եղէ, եղեր, եղեւ, եղ(է)աք, եղէք, եղեն) **եւ երկու ժամանակ ստորադասական եղանակում՝ առաջին ապառնի** (իցեմ, իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն. լինիցիմ, լինիցիս, լինիցի, լինիցիմք, լինիցիք, լինիցին) **եւ երկրորդ ապառնի՝** (իցին, լիցիս լիցի, լիցիմք, լիցիք, լիցին. եղէց, եղիցիս/եղիցիս, եղիցի, եղիցուք, եղիչիք, եղիցին): **Օժանդակ բայերի** **եւ եղանակաժամանակային ձեւերի յարաբերակցութիւնը ցոյց է տրուամ հետեւեալ աղիւսակում.**

Աղիւսակ 3

| Եղանակ | Ժամանակ | Օժանդակ բայեր | |
|---------------------|------------------------|---------------|----------------|
| Մահմանական | Ներկայ | եմ | լինիմ |
| | Անցեալ անկատար | էի | լինէի |
| | Անցեալ կատարեալ | | եղէ |
| Ստորադասական | Առաջին ապառնի | իցեմ | լինիցիմ |
| | Երկրորդ ապառնի | | լիցիմք եղէց |
| Հրամայական | Ներկայ | | եր |

Ինչպէս ցոյց է տրուած Համար 4 աղիւսակում, բաղադրեալ ժամանակաձեւերի մէջ տարբերակում ենք հիմնական եւ երկրորդական բաղադրեալ ժամանակներ՝ ըստ եմ եւ լինիմ օժանդակ բայերի:

Վերլուծական կամ բաղադրեալ ժամանակներն են՝ սահմանական եղանակի վաղակատար-յարակատար ներկայ, վաղակատար-յարակատար անցեալ (ըստ որոշ գերականների՝ գերակատար), անցեալ կատարեալ, ապառնի, անցեալի ապառնի, ստորադասական եղանակի առաջին ապառնի, երկրորդ ապառնի, հրամայական եղանակի ներկայ (բուն եւ արգելական), հրամայական եղանակի ապառնի:

Բաղադրեալ ժամանակների կազմութեանը մասնակցող եմ եւ լինիմ օժանդակ բայերի իմաստագործառական առանձնայատկութիւնների մասին գրաբարի գերականութիւններում որոշակի կարծիքներ չկան: Իմաստային առումով դրանց կարելի է վերագ-

բել թոյլ դրսեւորուած կերպային տարբերութիւն՝ և մով ձեւերը արտայայտում են անորոշութիւն (indefinite), իսկ լինիմով ձեւերը՝ տեւականութիւն (durative): Զեւաբանական տեսակէտից աւելի զգալի են եղանակաժամանակային նրբերանգային տարբերութիւնները, որոնց հիման վրայ լինիմ եւ նրա անցեալի տարահիմք եղէ օժանդակ բայերով կազմուած ձեւերը կարելի է առանձնացնել որպէս երկրորդական բաղադրեալ ժամանակներ¹⁴ (տե՛ս Աղիւսակ Հարամ 4):

Աղիւսակ 4

| Եղանակներ | | | | |
|----------------------------|---------------------------|---------------------------------------|---|---|
| Առաջարկած մասնակիցներ | | Մասնակիցների համար պատճենահանությունը | Առաջարկած մասնակիցների համար պատճենահանությունը | Առաջարկած մասնակիցների համար պատճենահանությունը |
| Ժամանակակից գործադրություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն |
| Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն |
| Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն | Հայաստանի Հանրապետություն |

14 Գ. Խաչատրեանն այդ ժամանակածեւերը կոչում է «կրկնաբաղադրեալ» (տե՛ս նշ. աշխ., 200):

15 Այս՝ ապանի և անցեալի ապանի ժամանակները Գ. Խաչատրեանն անուանում է «ապակատար» և «անցեալ ապակատար» ժամանակներ, ընդունում է նաև ապակատար ապանի ժամանակ։ Ցարացյում եղողյթային միասնականութիւնը ապահովեր նպատակով մենք նպատակայրամբ համարեցինք պահպանել «ապանի» աւանդական անուանումը (հնո՞ւառաջին և երկրորդ ապանիներ) այդ ժամանակի բոլոր դրսեւորումների համար։

| | | | |
|---|--|---|---|
| Եղիշեալ բարություն Հայաստանի Հանրապետություն | Ներկայ սիրեալ լինիմ Անցեալ անկատար սիրեալ լինիք Անցեալ կատարյալ սիրեալ եղէ | Ապառնի սիրեալ լինիցիմ Անցեալ ապառնի սիրեալ լիչիմ Ապառնի սիրեալ եղէց | Ներկայ սիրեալ լիք (Արգելական) սիրեալ մի' լինիք Ապառնի սիրեալ լիչիք սիրեալ եղիչիք |
|---|--|---|---|

Այսպիսով, դասական շրջանի գրաբարում բայական բառոյթը ներկայանում է յարացուցային անդամների իւրայատուկ կառուցուածքով, որ արտայայտում է բառակազմական եւ ձեւակազմական ցուցիչների որոշակի բաշխումով, եւ ձեւային հակադրութիւնների դրսեւորումներով։ Նկատելի է սակայն, որ բայական յարացոյցի ոչ բոլոր կառուցուածքային տարրերն են պահպանել իրենց նախկին իմաստագործառական որոշակիութիւնը եւ հանդէս են գալիս որպէս բայական բառոյթի ձեւակազմական առանձնայատկութիւններ, որոնք այլեւս նախկին իմաստագործառական բեռնուածութիւնը չունեն։

Որպէս ընդհանուր եղբակացութիւն կարող ենք ասել, որ դասական գրաբարի շրջանում բայական յարացոյցի անդամների կառուածքային տարրերից որոշակի քերականական իմաստ եւ գործառոյթ ունեն հիմնականում դիմաթուային վերջառութիւնները համադրական կառուցուածքի բայաձեւերում, ինչպէս նաեւ և լինիմ օժանդակ բայերը վերլուծական կառուցուածքի բայաձեւերում։ Միաժամանակ բայական յարացոյցի անդամները հանդէս են բերում եղանակաժամանակային ձեւերի կառուցուածքային տարրերի՝ բառակազմական եւ ձեւակազմական իւրայատուկ գրսեւորումներ (այդ թվում՝ լծորդութիւնները, ներկայի եւ կատարեալի հիմքակազմիչ ածանցները կամ դրանց բացակայութիւնը), որոնք, ըստ հետազոտողների, նախագրային շրջանում ծառայել են կերպի եւ սեռի արտայայտմանը, դասական ժամանակաշրջանում չեն պահպանել իրենց քերականական իմաստները, այլ հանդէս են գալիս որպէս ներկայի եւ կատարեալի հիմքերի ձեւական ցուցիչներ։

ՀԻԱՆԱ ԹՈՎՍԵՓԵԱՆ

Summary**MORPHOLOGICAL AND WORD-FORMING STRUCTURE
OF OLD ARMENIAN VERBAL PARADIGM MEMBERS.**

LIANA HOVSEPYAN

Old Armenian verbal paradigm members have more complicated structure in comparison with the nominal ones with strict opposition of stems and inflectional endings or inner inflexion (resp. direct and oblique cases). During the historical development of Old Armenian in the pre-literary period some structural elements of the verbal paradigm (in particular the voice infixes or the thematic vowels in personal endings) had lost their meanings and are preserved only as formalized markers of the present and the perfect stems.